ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի տնօրեն Ռ. Վարդանովայի (պետական ռեգիստրի վկայական թիվ 286.110.998992),

քննելով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար սարքավորումների և նրանց մասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 06.07.2021թ. ներկայացված (07.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/50 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.07.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն ս.թ. հունիսի 25-ին մասնակցել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից

հայտարարված «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացրել է հայտ հրավերի 1, 2, 3 չափաբաժինների համար (հայտի փաստաթղթերը կից փաթեթում) :

Սակայն, պատվիրատուի կողմից հայտը մերժվել է միայն առաջին չափաբաժնի համար հետևյալ հիմքով. «Ձեր հայտը մերժվել է հիմք ընդունելով 526-ն 4 մայիսի 2017 թվականի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կատավարության N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա: 40. Հայտերի բացման նիստում՝4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնայինառաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերիպահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելուդեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատվածգնային առաջարկը»:

Նշենք, որ «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից բոլոր հավելվածները էլեյտրոնային ստորագրությամբ հաստատված են և համապատասխանում են հրավերի պահանջներին, ուստի հայտի մերժումն առաջին չափաբաժնի մասով համարում ենք անհիմն:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ.-ի N526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը: Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ մասնակիցն իրավունք ունի, նախքան պայմանագրի կնքումը, բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին գնահատելու «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ առաջին չափաբաժնի մասով:

Այնուհետև Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված պահանջ, որով խնդրել է պարտավորեցնել չեղյալ համարելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի հայտի մերժման որոշումը, «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով և «ՌՎ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ին ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված թիվ 72/16231 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով: Չափաբաժիններով ընթացակարգի դեպքում յուրաքանչյուր չափաբաժին դիտարկվում է և գնահատվում որպես առանձին մրցույթ: «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցել է՝ հայտ ներկայացնելով 1,2,3 չափաբաժիններին, սակայն 1-ին չափաբաժնին հայտ ներկայացնելիս գնային առաջարկի ֆայլը չի կցել Armeps համակարգում: Բանավոր կերպով խոսելով ֆինանսների նախարարության համապատասխան աշխատակցի հետ պարզ է դարձել, որ տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը 1-ին չափաբաժնի մասով գնումների էլեկտրոնային Armeps համակարգով հնարավոր է առաջացնի խնդիրներ և հնարավոր չլինի պայմանագրի փուլում որևէ գործընթաց իրականացնել:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով և ընթացակարգը այդ չափաբաժնով հայտարարել չկայացած՝ նոր մրցույթ հայտարարելու մտադրությամբ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.07.2021թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ

փաստերը.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար սարքավորումների և նրանց մասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» գնանշման հարցման ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 01.07.201թ հրապարակվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը, համաձայն որի՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար հիմք է հանդիսացել այն, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ ֆայլը կցված չէ:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի 06.07.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: ***Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի 5-րդ կետի 5.3 ենթակետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Այսպես, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար սարքավորումների և նրանց մասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» գնանշման հարցման ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 01.07.201թ հրապարակվել է «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը, համաձայն որի՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար հիմք է հանդիսացել այն, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ ֆայլը կցված չէ:

Այսպիսով՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով էլեկտրոնային գնումների համակարգում կցվել է Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, որի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ դրանում ներկայացված է նաև Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Ընկերության կողմից առաջարկվող գինը, որը համընկնում է Ընկերության կողմից համակարգում լրացված գնին, այսինքն՝ ըստ էության Ընկերության կողմից ներկայացվել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով Հավելված 2-ը՝ գնային առաջարկը,***<u>ուստի գտնում եմ, որ տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելուց հետո վերը նշված հիմքով՝ այն է 1-ին չափաբաժնի մասով հայտին չի կցվել Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելը չի բխում սույն որոշմամբ արձանագրված իրավակարգավորումների բովանդակությունից:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՌՎ պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 06.07.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 01.07.2021թ. թիվ 3 արձանագրությամբ Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը և 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «ՌՎ պրոջեկտ» ՍՊ ընկերությանը ներկայացնելու պայմանագիր կնքելու առաջարկ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**